ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Լեոյի անվան հ.65 ավագ դպրոց

Թեմա՝ Թուրքիայի և Իրանի աշխարհագրական համեմատական բնութագիրը

Դասախոս՝ Ա. Խաչատրյան

Կատարող՝ Երևանի թիվ 120 հիմնական դպրոցի աշխարհագրության ուսուցչուհի Աննա Մարտիրոսյան

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն ----------3
1.Թուրքիայի և Իրանի աշխարհագրական համեմատական
Բնութագիրը ----------4
2.Թուրքիայի և Իրանի աշխարհագրական դիրքերի համե-
մատական բնութագիրը ----------9
Եզրակացություն ----------14
Գրականության ցանկ ----------15

Ներածություն

Ավարտական-հետազոտական աշխատանքը ներկայացնում է Իրանի և Թուրքիայի աշխարհագրական համեմատական բնութագիրը: Աշխատանքը գրելիս լայնորեն օգտագործ-վել է աշխարհի ճանաչման աշխարհագրական համեմատական մեթոդը:

Աշխատանքը սկսվել է այդ երկու պետությունների աշխարհագրական բնութագրից (ռելիեֆ,կլիմայական պայմաններ,ջրագրություն,հողաբուսական ծածկ) և անցկացվել են համե-մատություններ, նշվել են նմանություններ և տարբերություններ:

Այնուհետև համեմատվել են երկու պետությունների աշխարհագրական դիրքերը (ՖԱԴ ,ՔԱԴ ,ՏԱԴ), այսինքն տրվել է այդ պետությունների հարաբերությունը իրենցից դուրս գտնվող օբյեկտների հետ,որոնց հետ նրանք գտնվում են փոխազդեցության մեջ և նույնպես նշվել են նմանություններն ու տարբերությունները:

Աշխատանքը ավելի պատկերավոր լինելու նպատակով օգտագործվել են նաև քար-տեզներ և նկարներ:

Այսպիսով, այս ավարտական- հետազոտական աշխատանքը բացահայտում է Թուրքիայի և Իրանի առանձնահատկությունները, նրանց բնորոշ գծերը , տիպականը, համեմատում է մեկը մյուսի հետ և գնահատում յուրաքանչյուրի տեղն ու դերը արդի աշխարհում:

1. Թուրքիայի և Իրանի աշխարհագրական համեմատական Բնութագիրը

Իրան , պաշտոնապես **Իրանի Իսլամական հանրապետություն**: Մայրաքաղաքը Թեհրանն է: Տարածքը կազմում է 1648195 կմ², բնակչությունը՝ 76,7 մլն մարդ(2012թ):

Թուրքիա, պաշտոնապես Թուրքիայի հանրապետության: Մայրաքաղաքը Անկարան է: Տարածքը՝ 781 հզ. կմ² է, իսկ բնակչության թիվը 75,2 մլն մարդ (2012թ):

Պետական կարգով Թուրքիան և Իրանը նախագահական հանրապետություններ են, իսկ կառուցվածքով՝ ունիտար: Թուրքիան ազգային կազմով միազգ է, իսկ Իրանը՝ բազմազգ:

Թուրքիայի պետական լեզուն թուրքերենն է, որը պատկանում է Ալթայան լեզվաընտանիքի թյուրքական լեզվախմբին, իսկ Իրանինը պարսկերենն է, որը պատկանում է

Հնդեվրոպական լեզվաընտանիքի իրանական լեզվախմբին: Երկու պետությունների պետական կրոնն էլ մահմեդականությունն է, բայց ուղղությունները տարբեր են: Թուրքիայում սունի ուղղությունն է, Իրանում՝ շիա: Իրանի պետական կյանքում մեծ է իսլամի ազդեցությունը, իսկ Թուրքիայում այն թուլացել է:

Իրանի տարածքը ամբողջովին գտնվում է Հարավ-Արևմտյան Ասիայում:

Տարածքով և բնակչության թվով ավելի մեծ է, քան Թուրքիան: Հյուսիսում Իրանը սահմանակցում է Հայաստանի, Ադրբեջանի, Թուրքմենստանի, հյուսիս-արևմուտքում Թուրքիայի, արևմուտքում Իրաքի, արևելքում Աֆղանստանի, հարավ-արևելքում Պակիստանի հետ:

Թուրքիան աշխարհի այն փոքրաթիվ երկրներից է, որի տարածքը միաժամանակ գտնվում է երկու աշխարհամասերում՝ Ասիայում և Եվրոպայում: Նրա տարածքի մեծ մասը (97 %)

գտնվում է Ասիայում, դրա համար էլ համարվում է ասիական երկիր: Եվրոպական մասը (պատմական անունը՝ Արևելյան Թրակիա) Բալկանյան թերակղզու ծայր հարավ-արևելքն է:

Թուրքիան արևելքից սահմանակից է Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի և Իրանի, հարավում Իրաքի և Սիրիայի, արևմուտքից՝ Հունաստանի և Բուլղարիայի հետ:

Ժամանակակից Թուրքիայի ներկայիս տարածքը քաղաքակրթության հնագույն օջախներից է: Այստեղ են ձևավորվել և հետագայում տարածվել հնդեվրոպական նախալեզուն, հնդեվրոպական ժողովուրդները: Այդ տարածքի արևելյան մասում է կազմավորվել հայազգը, ձևավորվել հայոց պետականությունը:

1923 թ.-ին Փոքրասիական և Հայկական բարձրավանդակների և դրանց հարակից որոշ հատվածներն ընդգրկող, նախկինում հայերով ու հույներով բնակեցված տարածքներում Թուրքիան հռչակվեց հանրապետություն:

Մահմեդական արևելքում Թուրքիան հանրապետություն հռչակված առաջին երկիրն է:

Իրանը զբաղեցնում է Իրանական բարձրավանդակի ընդարձակ տարածքի 2/3 մասը՝ Միջագետքից մինչև Կոպետ-Դաղի կատարները տարածվելով մոտ 1400 կմ, և Արաքսից մինչև Պակիստանի սահմանակից Բելուջիստան՝ մոտ 2250 կմ: Հյուսիսում ձգվում է Էլբուրսի լեռները՝ Դեմավենդ բարձր գագաթով, իսկ հարավում Զագրոսի լեռները: Էլբուրսի լեռների և Կասպից ծովի հարավային ափերի միջև տարածվում է Հարավկասպիական դաշտավայրը, իսկ հարավում՝ Միջագետքի դաշտավայրի մի մասը:

Էլբուրսի լեռներ

Թուրքիան նույնպես լեռնային երկիր է՝ Փոքրասիական բարձրավանդակի և Հայկական լեռնաշխարհի սահմաններում: Հյուսիսից եզերվում է Պոնտական, հարավից՝ Տավրոսի լեռներով: Երկրի արևելքում, ՀՀ-ի սահմանի մոտ, Արաքս գետի աջ ափին վեր են խոյանում Մեծ ու Փոքր Մասիսները: Մեծ Մասիսը Թուրքիայի ամենաբարձր գագաթն է (5165 մ):

Արարատ լեռ

Թուրքիայում կան նաև գործող հրաբուխներ՝ Նեմրութը, Թոնդրակը:

Թուրքիայի տարածքը գտնվում է մերձարևադարձային կլիմայական գոտում: Սև և Միջերկրական ծովերի ափամերձ գոտիներում կլիմայի տիպը միջերկրածովյան է, իսկ կենտրոնական մասերում ցամաքային կլիմա է, այդ է պատճառը, որ Թուրքիայի տարածքի մեծ մասը զբաղեցնող սարահարթերում ամռանն անձրևներ գրեթե չեն լինում, և արևը վիթխարի

տարածությունների վրա խանձում է ամբողջ բուսականությունը: Ձմեռներն այստեղ դաժան են, ցուրտ:

Իրանի տարածքը գտնվում է երկու կլիմայական գոտիներում՝ հյուսիսային մասը մերձարևադարձային գոտում,իսկ հարավային ընդարձակ մասը արևադարձային գոտում:Այդ պատճառով էլ Իրանի կլիման նրա տարածքի մեծ մասում չոր, ցամաքային է: Տեղումները չափազանց քիչ են՝ համենայն դեպս երկրի տարածքի մեծ մասում: Առավել շատ տեղումներ լինում են տարվա ձմեռային և գարնանային շրջաններում: Առանձնապես չոր է Իրանական բարձրավանդակի ներքին շրջաններում, քանի որ ծայրամասային լեռները կլանում են ողջ խոնավությունը: Երկրի ամենախոնավ շրջանը Կասպից ծովի առափնյա շրջանն է: Իրանական բարձրավանդակի ներքին շրջաններում են գտնվում երկու ամենախոշոր անապատները՝ Դեշտե-Քեվիր և Դեշտե-Լութ անապատները, որոնք զբաղեցնում են երկրի տարածքի մեկ ութերորդ մասը: Մեծությամբ երրորդ անապատը Ջազմուրյան անապատն է: Առհասարակ ամառն Իրանում ամենուրեք շոգ է և չոր՝ բացառությամբ Կասպց ծովի ափերի:

Թուրքիայի տարածքից՝Հայկական լեռնաշխարհից, են սկիզբ առնում Առաջավոր Ասիայի խոշոր գետերը՝ Արևելյան և Արևմտյան Եփրատները, Արաքսը, Ճորոխը և Տիգրիսը: 1720 մ բարձրության վրա է գտնվում լեռներով շրջապատված Վանա լիճը կամ Վանա ծովը: Լիճը հայտնի է իր նշանավոր տառեխ ձկով: Անատոլական սարահարթում է գտնվում Թուզ լիճը:

Իրանը իր չորային կլիմայի պատճառով աղքատ է ջրային ռեսուրսներով, ամենախոշոր և միակ նավարկելի գետը Կարունն է Շատ էլ Արաբի ձախափնյա վտակը, իսկ ամենամեծ լիճը Հայկական լեռնաշխարհում գտնվող Ուրմիան է, որի աղիության պատճառով օրգանական աշխարհը բացակայում է և գոլորշիացման պատճառով մակերեսը փոքրանում է:

Իրանում չորային կլիմայի պատճառով անտառները քիչ են (11%), իսկ Թուրքիայում անտառապատ տարածքները համեմատաբար ավելի շատ են (25%):

Իրանում գերակշռում են չոր տափաստանները, կիսաանապատային ու անապատային լանդշաֆտները, այստեղ արգավանդ հողերը քիչ են:

Թուրքիայում՝ Հայկական լեռնաշխարհի միջլեռնային գոգավորություններում, տարածվում են բերրի սևահողային տափաստանները, իսկ բարձրալեռնային շրջաններում՝ հյութալի խոտածածկով արոտավայրերը: Անատոլական սարահարթում տարածվում են չոր տափաստանային և կիսաանապատային լանդշաֆտները:

Տարածաշրջանում ընդհանուր առմամբ առկա է քաղցրահամ ջրի հիմնախնդիրը, բայց այն ավելի սուր է Իրանում, քան Թուրքիայում:

2. Թուրքիայի և Իրանի աշխարհագրական դիրքերի համեմատական բնութագիրը

ՖԱԴ. Երկու պետության տարածքներն էլ գտնվում են Ալպ-Հիմալայան գեոսինկլինալային մարզում, այդ պատճառով էլ հաճախակի են լինում երկրաշարժեր: Նրանք գտնվում են Առաջավորասիական բարձրավանդակների տարածքում: Այստեղ ավելի շատ են լեռնային տարածքները, քան հարթավայրերը, որը կարելի է համարել բացասական գործոն երկուսի համար էլ:

Մոտ են գտնվում Միջերկրական, Սև, Կասպից ծովերի, Պարսից և Օմանի ծոցերի ավազաններն: Թուրքիայի ափերը ողողում են չորս ծովեր՝ Սև ծով, Միջերկրական ծով, Էգեյան և Մարմարա ծովերը: Թուրքիայի տարածքում են նաև Բոսֆորի և Դարդանելի նեղուցները: Սև ծովի ափերը թույլ են կտրտված, դրան հակառակ Միջերկրական և Էգեյան ծովերի խիստ կտրտված ափերը հարմար են նավահանգիստների համար: Իրանի հյուսիսային ափերը ողողում են Կասպից ծովի, իսկ հարավային ափերը Պարսից ծոցի և Օմանի ծոցի ջրերը:

Այսպիսով երկու պետություններն էլ ծովափնյա են և այդ առումով ունեն բարենպաստ դիրք:

ՏԱԴ. Թուրքիան ունի բարենպաստ աշխարհագրական դիրք միջազգային ուղիների նկատմամբ՝ այն գտնվում է Եվրոպան Ասիայի և սևծովյան երկրները միջերկրածովյան երկրների հետ կապող կարևոր ճանապարհների հանգուցակետում: Մարմարա ծովը, Բոսֆորի և Դարդանելի նեղուցները նույնպես միջազգային կարևոր ջրուղիներ են, որոնցով Սև ծովը կապվում է համաշխարհային օվկիանոսի հետ: Բացի այդ, նեղուցների վրա կառուցված 2 մեծ կամուրջներով են անցնում 2 աշխարհամասերը միմյանց կապող երկաթուղային ու խճուղային մայրուղիները: Թուրքիայի խողովակաշարերը Ադրբեջանի և Ռուսաստանի նավթը և գազը հասցնում են միջերկրածովյան ափ (Բաքու-Թբիլիսի-Ջեհյան նավթամուղ):

Իրանը այդ առումով նույնպես ունի հարմար աշխարհագրական դիրք , նրա տարածքով են անցնում Պարսից ծոցի ավազանի երկրները Եվրոպայի և Ռուսաստանի հետ կապող միջազգային ուղիները: Կասպից ծովով կապ է հաստատում մերձկասպյան ավազանի երկրների հետ, Պարսից ծոցով իրականացնում է բեռնափոխադրումներ աշխարհի շատ երկրների հետ:

Երկու պետություններն էլ աչքի են ընկնում ռեկրեացիոն ռեսուրսներով: Թուրքիայում դրանք Միջերկրական և Սև ծովերի ավազային լողափերն են,լեռնային գեղատեսիլ լանդշաֆտները, պատմաճարտարապետական հուշարձանները, իսկ Իրանում՝ Կասպից ծովի և Պարսից ծոցի առափնյա գոտիները և լեռնային շրջանները:

Իրանի ՏԱԴ-ի դրական կողմերից է Պարսից ծոցի և Կասպից ծովի ավազաններում գտնվելը: Այդ շրջանները հարուստ են նավթով և բնական գազով: Իրանը նավթի արդյունահանմամբ աշխարհում գրավում է չորրորդ տեղը և ՆԱԵԿ-ի անդամ է: Այստեղ են գըտնվում նավթի համաշխարհային պաշարների 9%-ը և բնական գազի 17 %-ը;

Հսկայական են հանքային աղերի պաշարները,մեծ են շինանյութի հատկապես մարմարի պաշարները:

Տնտեսական արժեք են ներկայացնում նաև Կասպից ծովի թառափ ձկնատեսակը և Պարսից ծոցի կորալն ու մարգարիտը:

Ի տարբերություն Իրանի Թուրքիան աղքատ է վառելիքային հանածոներով, բայց մետաղային և ոչ մետաղային օգտակար հանածոներով հարուստ է: Դրանցից մի քանիսի պաշարներով Թուրքիան կարևոր տեղ է գրավում աշխարհում: Այսպես նրա ընդերքում է գտնվում բորատների համաշխարհային պաշարների կեսից ավելին և քրոմի պաշարների 8%-ը: Թուրքիան հարուստ է նաև սնդիկի , ծարիրի, վոլֆրամի, պղնձի, մանգանի հանքանյութի պաշարներով: Զգալի են ածխի, տուֆի, պեռլիտի, ծծմբի, կերակրի աղի պաշարները:

Այսպիսով՝տնտեսաաշխարհագրական դիրքը երկու պետությունների համար էլ բարե -նպաստ է:

ՔԱԴ. Երկու պետությունների քաղաքաաշխարհագրական դիրքն էլ բարդ է:

Իրանի ՔԱԴ-ի առանձնահատկություններից է ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիայի, արաբական աշխարհի, եղբայրական պետություն համարվող Աֆղանստանի հետ սահմանակից լինելը:

Թուրքիայի ՔԱԴ-ի առանձնահատկություններից է այն, որ նա լավ հարաբերություն-ներ չունի իր հարևան Հայաստանի հետ, գտնվում է Հարավային Եվրոպայի, Սև ծովի ավազանի, Իրանի և արաբական պետությունների կենտրոնում, որը նրան հաղորդում է հատուկ կարևորություն և նրա վրա է բևեռում գերտերությունների ուշադրությունը:

Երկու պետությունների ՔԱԴ-ի բացասական կողմն այն է,որ տարածաշրջանը, որտեղ նրանք գտնվում են լի է հակամարտություններով (հայ-ադրբեջանական), ընթանում են պատերազմներ (Սիրիական) և կան քաղաքական անկայուն վիճակում գտնվող պետություններ (Իրաք, Աֆղանստան):

Թուրքիան սահմանակցում է ԵՄ անդամ երկու երկրների՝ Բուլղարիային և Հունաստան-ին: Չնայած այն հանգամանքին, որ Թուրքիան մշտապես ունեցել է արևմտամետ դիրքորոշում, Եվրոպայի երկրների հետ լավ հարաբերություններ ունենալը թուրքական արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից է:

Թուրքիայի արտաքին քաղաքականության մյուս կարևոր ասպեկտներից մեկն է Թուրքիա-ԱՄՆ հարաբերությունների խորացումը: Այս երկրները ունեն ռազմավարական ամուր կապեր: 1952 թվականին ԽՍՀՄ կողմից հնարավոր ագրեսիայից խուսափելու համար՝ Թուրքիան անդամակցել է ՆԱՏՕ-ին, որի արդյունքում Թուրքիան դարձել է ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի տարածաշրջանային գլխավոր գործընկերը: Թուրքիան Միացյալ Նահանգներից ստանում է տնտեսական, քաղաքական և դիվանագիտական խոշոր աջակցություն: Բացի այդ, ԱՄՆ-ն աջակցում է Թուրքիային՝ եվրաինտեգրման գործընթացում: Սառը պատերազմից հետո թուրքական արտաքին քաղաքականության նոր թիրախներ են դարձել Մերձավոր Արևելքը, Կովկասը և Բալկանները:

Իրանը ավելի շատ հարաբերություններ է հաստատել Ռուսաստանի հետ: Ակտիվորեն զարգանում են հայ-իրանական հարաբերությունները, իսկ Թուրքիան 1993 թ-ին խզեց իր հարաբերությունները Հայաստանի հետ՝ փակելով հայ-թուրքական պետական սահմանը:

Իրանի և Ադրբեջանի միջև սերտ, բարեկամական փոխհարաբերությունների ձևավորման համար ևս որոշակի նախադրյալներ կան: Սակայն փոխադարձ անվստահության պայմաններում դրանք ի սկզբանե ընթանում են լուրջ վայրիվերումներով:

Թուրքիան Արցախյան հակամարտության հարցում պաշտպանում է Ադրբեջանի դիրքորոշումը, որի հետ ունի դաշնակցային հարաբերություններ: Ադրբեջանին Թուրքիան համարում է եղբայրական պետություն և նրան աջակցում է ցանկացած հարցում;

Իրանի և Ադրբեջանի միջև սերտ, բարեկամական փոխհարաբերությունների ձևավորման համար ևս որոշակի նախադրյալներ կան: Սակայն փոխադարձ անվստահության պայմաններում դրանք ի սկզբանե ընթանում են լուրջ վայրիվերումներով: Բայց և այնպես իրանական կողմն առավել մեծ շահագրգռություն է դրսևորում բարիդրացիական սերտ փոխհարաբերություններ հաստատելու հարցում:

Թուրքիան աջակցել է արաբական երկրների ընդդիմադիր որոշ ուժերի, ինչպես օրինակ Սիրիայում և Եգիպտոսում: Արդյունքում լարվել են Սիրիայի և Եգիպտոսի հարաբերությունները Թուրքիայի հետ: 2010 թվականին սրվել են նաև Իսրայելի և Թուրքիայի

դիվանագիտական հարաբերություններ, սակայն դրանք վերականգնվել են 2016 թվականի հունիսին: Իրանի և Իսրայելի հարաբերությունները նույնպես լարված են:

2016 թվականին սրվել էին նաև թուրք-ռուսական հարաբերությունները, որոնք կարգավորվել են 2016 թվականի վերջին: Հարաբերությունների սրման պատճառ էր դարձել թուրքական ուժայինների կողմից ռուսական ռազմական օդանավի խոցման փաստը: Իրանը լավ հարաբերություններ ունի Ռուսաստանի հետ:

Վերջին ամիսների ընթացքում երկու երկրների հարաբերությունները լարված էին կապված Տիգրիս և Եփրատ գետերի ակունքներում Թուրքիայի կողմից ամբարտակներ կառուցելու և Սիրիաի հյուսիսային շրջանում Թուրքիայի ռազմական գործողությունների հետ: Սակայն Իրանի Իսլամական Հանրապետության արտգործնախարարի այցը Թուրքիա փորձ էր մեղմացնելու այդ լարվածությունը, իսկ 2023-ի սեպտեմբերի 3-ին Թուրքիայի նոր արտգործնախարար Հաքան Ֆիդանի այցը Թեհրան թերևս նոր սկիզբ կամ հնարավորություն է ավելի բարելավելու և կարգավորելու երկու երկրների հարաբերությունները: Չնայած, որ Անկարա-Թեհրան երկկողմ հարաբերությունների վրա ազդում են միջազգային համակարգի և տարածաշրջանային զարգացումները, և հաշվի առնելով հնարավորությունների և խոչընդոտների մեծ պատկերը երկկողմ և բազմակողմ հարաբերություններում, սակայն ըստ երևույթին Իրանի և Թուրքիայի երկկողմ հարաբերություններն այս այցից հետո ավելի պարզորոշ կդառնան քանի որ սա Թուրքիայի նախագահական ընտրություններից հետո այդ երկրի նոր արտգործնախարարի և նրա հայտարարած արտաքին քաղաքականության նոր պլանից հետո առաջին այցն էր Իրան: Անկասկած, Իրանն ու Թուրքիան վաղեմի մրցակիցներ և ուժային կենտրոններ են Մերձավոր Արևելքի և իսլամական աշխարհում, որոնց հարաբերությունների բարելավումը կամ սրացումը ազդեցություն է ունենում ողջ տարածաշրջանի երկրների, ինչպես նաև Հայաստանի վրա:

Իրանի և Թուրքիայի դիրքորոշումները համընկնում են նաև Իրաքի քրդերի հանրաքվեի հարցում: Կողմերը մտահոգված են, որ Իրաքի քրդերի անկախացումը կարող է ամրապնդել անջատողական տրամադրություններն իրենց քրդաբնակ շրջաններում և պատրաստակամություն են հայտնել՝ համագործակցել Իրաքի դաշնային իշխանությունների հետ: Երկու երկրներն էլ Իրաքի Քրդստանի շրջանի սահմանների մոտ անցկացրել են ռազմական զորավարժություններ, որոնք ընդգրկել են նաև իրաքյան բանակը: Իրանը ի պատասխան քրդական հանրաքվեի նաև դադարեցրել է Իրաքյան քրդերի հետ առևտուրը և

հայտարարել, որ թույլ կտա իրաքյան զինված ուժերին իրենց տարածքով ներթափանցել քրդական շրջան: Թուրքիան իր հերթին սպառնացել է փակել ցամաքային սահմանը և դադարեցրել է Իրաքյան Քրդստանից նավթի արտահանումը թուրքական Ջեյհան նավահանգստի միջոցով: Բացի քրդական հարցից Իրանն ու Թուրքիան համակարծիք էին վերջերս Պարսից ծոցում Քաթարի հետ կապված ճգնաժամի հարցում՝ հակված լինելով պաշտպանելու Քաթարին: Մշտապես թշնամական հարաբերություններ ունեցող այս երկրներն այժմ զարգացնում են առևտրային և տնտեսական հարաբերություններ՝ ձգտելով երկկողմ առևտուրը 2018 թվականին հասցնել 30 միլիարդ դոլարի անցած տարվա 10 միլիարդի փոխարեն: Դրա հետ մեկտեղ Թուրքիայի ու Իրանի առաջնորդները պայմանավորվել են առևտրային նոր հարաբերությունների շուրջ: «Մեր տնտեսական հարաբերությունները փոխարժեքի տատանումներից պաշտպանելու համար մենք որոշել ենք առևտուր իրականացնել սեփական արժույթով»- ընդգծել է Թուրքիայի նախագահը: Երկու երկրների միջև հարաբերությունները զգալիորեն տարբերվում են նախկինում եղած հարաբերություններից:

Եզրակացություն

Այսպիսով՝ համեմատելով Թուրքիայի և Իրանի աշխարհագրական բնութագիրը, գալիս ենք այն եզրակացությանը, որ կան նմանություններ և տարբերություններ: Տարբերությունները ի հայտ են գալիս այդ պետությունների կլիմայական պայմանների,ջրագրական ցանցի,հողաբուսական ծածկի ուսումնասիրության ժամանակ: Տարբերվում են նաև բնակչությունը՝ազգային կազմով,կրոնի ուղղությունով,լեզվով:Տարբերություններ են նաև ի հայտ գալիս Թուրքիայի և Իրանի աշխարհաքաղաքական դիրքի համեմատության ժամանակ,քանի որ այդ պետությունները արտաքին քաղաքականության մեջ ունեն տարբեր մոտեցումներ և դիրքորոշումներ:

Նմանությունները կապված են նրանց պետական կարգի, կառուցվածքի. ռելիեֆի, հարուստ օգտակար հանածոների, ֆիզիկաաշխարհագրական և տնտեսաաշխարհագրական բարենպաստ դիրքերի, տնտեսության զարգացման մակարդակների հետ:

Օգտագործված գրականություն

1. «Աշխարհագրություն-8» դասագիրք, հեղ.Մ.Մանասյան, Ռ. Մարգարյան, Ա.Հովսեփյան, Գ.Հովհաննիսյան-2014թ. (էջ107-118)

2. «Աշխարհագրություն-8» դասագիրք, հեղ. Գ.Ավագյան, Ռ.Մարգարյան-1999թ.(էջ3-25)

3. https://hy.wikipedia.org/wiki/Թուրքիա

4. https://hy.wikipedia.org/wiki/Իրան

5.https://www.aravot.am/2023/09/08/1367323/